

Սերժիկ ԱՎԵՏԻՍՅԱՆ

*ՀՀ քրեական վերաքննիչ դատարանի դատավոր,
իրավաբանական գիտությունների դոկտոր,
Ռուս-հայկական (Մլավոնական) համալսարանի պրոֆեսոր*

ՈՐՊԵՍ ԶԵՆՔ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ԱՅԼ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ԳՈՐԾԱԴՐՄԱՄԲ ԿԱՏԱՐՎԱԾ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

I. Որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրման հարցը քրեական իրավունքի տեսության և քրեական օրենսդրության պրակտիկայում ունի եռաստիճան քրեաիրավական նշանակություն:

1. Որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրումը քրեական օրենսգրքում նախատեսված է որպես որոշ հանցակազմերի որակյալ (ծանրացնող) հանգամանք: Դրանք են՝

1) ՀՀ քր. օր-ի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետ (ավազակությունը),

2) ՀՀ քր. օր-ի 218-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ (պատանդ վերցնելը),

3) ՀՀ քր. օր-ի 221-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ (օդանավ, նավ կամ երկաթուղային շարժակազմ փոխանցելը կամ զավթելը),

4) ՀՀ քր. օր-ի 258-րդ հոդվածի 4-րդ մաս (խուլիգանությունը),

5) ՀՀ քր. օր-ի 355-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետ (փախուստն ազատագրված վայրից, կալանավորվածներին պահելու վայրից կամ ձերբակալվածներին պահելու վայրից):

Ճիշտ և նպատակահարմար կլինի արարքը ծանրացնող հիշյալ հանգամանքը նախատեսել նաև այլ հանցակազմերում (ՀՀ քր. օր-ի 182-րդ, 183-րդ, 238-րդ և այլ հոդվածներ):

2. Որպես զենք օգտագործվող որոշ առարկաների գործադրումը, ՌԴ քր. օր-ի 63-րդ հոդվածի համաձայն, կարող է դիտվել որպես պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող հանգամանք (երբ դա արարքի որակյալ հանգամանք չէ):

Սակայն ՀՀ քր. օր-ի 63-րդ հոդվածը պատասխանատվությունը և պատիժը ծանրացնող այդպիսի հանգամանք չի նախատեսում, ինչը մեր կարծիքով սխալ է:

3. Որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրումը կարևոր նշանակություն ունի նաև պատիժ նշանակելու հարցում:

Այդպիսի առարկաների գործադրումը բնութագրում է արարքի՝ հանրության համար վտանգավորության աստիճանը: Հետևապես, անկախ այն բանից, թե զենք չհանդիսացող առարկաների գործադրումը տվյալ հանցակազմի որակյալ հանգամանք հանդիսանում է, թե ոչ, իրավակիրառ մարմինները պարտավոր են պարզել և բավարար փաստական տվյալներով ապացուցել ոչ միայն այդպիսի առարկայի առկայությունը մեղավորի մոտ, այլ նաև դրա փաստացի օգտագործումը հանցագործության կատարման ընթացքում:

Վերջին հանգամանքն ունի կարևոր պրակտիկ նշանակություն: Օրինակ՝ մի խուլիգանության գործով ամբաստանյալին մեղադրանք էր առաջադրվել ՀՀ քր. օր-ի 258-րդ հոդվածի 4-րդ մասով, այն բանի համար, որ խուլիգանության ժամանակ ձեռքերով և մետաղյա ձողով տուժողին տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ էր պատճառել: Ամբաստանյալն ի սկզբանե ժխտել էր իր մոտ մետաղյա ձողի առկայությունը: Տուժողը տվել էր հակասական ցուցմունքներ: Դատաբժշկական փորձաքննության եզրակացությամբ հաստատվել էր, որ տուժողի մարմնի վրա հայտնաբերված որոշ մարմնական վնասվածքները չէին կարող հասցվել նշված ձողով, որը քննիչի կողմից չէր հայտնաբերվել: Ամբաստանյալի արարքը ՀՀ քր. օր-ի 258-րդ հոդվածի 4-րդ մասից վերադարձվել է նույն հոդվածի 2-րդ մասով:

II. Կարելի է արձանագրել, որ որպես զենք օգտագործվող այլ առարկաներ են համարվում զենք չհանդիսացող այն բոլոր առարկաները, որոնցով հնարավոր է մարդու առողջությանը վնաս պատճառել:

Այդպիսի առարկաները զենքից տարանջատելու համար անհրաժեշտ է ղեկավարվել «ՀՀ զենքի մասին» 03.07.1998թ. ընդունված օրենքով:

Որպես զենք օգտագործվող այլ առարկաներ կարող են հանդիսանալ՝ ա) տնտեսական նշանակության առարկաները (դանակ, մուրճ, կացին և այլն), բ) հանցագործության կատարման ժամանակ մարդկանց մարմնական վնաս պատճառելու համար հատուկ վերցված առարկաները (շղթա, մահակ և այլն) և գ) դեպքի վայրից վերցված և օգտագործված ցանկացած առարկա (քար, փայտ, ապակու կտոր և այլն):

Ավագակային հարձակման գործերով, ի տարբերություն խուլիգանության հանցակազմի, կարևոր է նկատի ունենալ, որ որպես զենք օգտագործվող կոնկրետ առարկայի գործադրումը կարող է դիտվել որպես արարքի որակյալ հանգամանք այն դեպքում, երբ պարզվի, որ տվյալ առարկայով տուժողի կյանքի կամ առողջության համար կարող էր վտանգավոր բռնություն կիրառվել:

Որպես զենք չեն կարող դիտվել՝

ա) ոչ պիտանի զենքը,

բ) զենքի մակետները,

գ) իսկականի հետ նմանություն ունեցող (խաղալիք) մանկական զենքերը,

դ) զենքի նմանվող առարկաների իմիտացիա (օրինակ՝ ատրճանակ-կրակայրիչ):

Միևնույն ժամանակ հիշյալ առարկաները կարող են օբյեկտիվորեն օգտագործվել մարմնական վնասվածքներ հասցնելու համար, այսինքն՝ դիտվել որպես զենք օգտագործվող այլ առարկաներ (եթե հանցավորը մտադրված է եղել դրանք օգտագործել): Իսկ եթե այդպիսի մտադրություն չի եղել, արարքը պետք է որակվի որպես հասարակ ավագակային հարձակում կամ հասարակ խուլիգանություն (եթե բացակայում են արարքի այլ որակյալ հանգամանքները):

Բոլոր դեպքերում, զենք չհանդիսացող հիշյալ առարկաներն իրենց բնույթով և բնութագրող հատկանիշներով պետք է այնպիսին լինեն, որ դրանց օգտագործումը կյանքի կամ առողջության համար կարող է իրական վնաս հասցնել:

Խուլիգանության դեպքում նման առարկաների օգտագործմամբ մարմնական վնասվածքներ հասցնելու նպատակն արարքի պարտադիր հատկանիշ չէ: Կարևորն այն է, որ մեղադրյալը գիտակցի, որ նման առարկաների օգտագործումը կարող է վտանգավոր լինել մարդու կյանքի և առողջության համար:

III. Նախկին ՀՀ քրեական օրենսգրքի 222-րդ հոդվածի 4-րդ մասը պատասխանատվություն էր սահմանում խուլիգանության համար, որը կատարվում էր, մասնավորապես, «մարմնական վնասվածքներ հասցնելու համար հատուկ հարմարեցված առարկաներով»:

Դատական պրակտիկայում այդպիսի առարկաների թվին դասվում էին ոչ միայն այն առարկաները, որոնք նախապես կամ խուլիգանության ժամանակ հարմարեցվում էին մարմնական վնասվածքներ հասցնելու համար, այլ նաև այնպիսի առարկաներ, որոնք նախնական փոփոխության չէին ենթարկվում, բայց մեղավոր անձի կողմից հատուկ պատրաստվում էին և նույն նպատակով պահվում նրա մոտ:

Օրենսդրական տվյալ ձևակերպումը հանգեցրել էր բազմաթիվ դատական սխալների, հաճախ տեղի էր ունենում օբյեկտիվ մեղսայնացման կիրառում և անձինք անհիմն դատապարտվում էին 222-րդ հոդվածի 4-րդ մասով:

Նոր ՀՀ քրեական օրենսգրքում խուլիգանության հանցակազմն այդպիսի որակյալ հանգամանք չի պարունակում: Քրեական օրենսգրքի 258-րդ հոդվածի 4-րդ մասում օգտագործվում է «զենք կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաներ» որակյալ հանգամանքը: Այդ մոտեցումը ճիշտ է և արդարացված:

Բացառություն է կազմում ՀՀ քր. օր-ի 359-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետը (ոչ կանոնագրքային հարաբերություններ), ինչը մեր կարծիքով հիմնավոր չէ: Այսինքն՝ օրենսդրի հա-

մար միևնույն է, թե որտեղից և երբ են վերցված մարդուն վնաս պատճառելու հնարավորություն ընձեռող առարկաները: ՀՀ քրեական իրավունքի Հատուկ մասի 2003թ. դասագրքի Երևանի պետական համալսարանի հեղինակները, հղում անելով ՌԴ Գերագույն դատարանի Պլենումի 1991թ. դեկտեմբերի 24-ի «Խուլիզանության գործերով դատական պրակտիկայի մասին» թիվ 5 որոշումը, համաձայն որի՝ «հանցագործության վայրում վերցված առարկաների գործադրումը կամ գործադրման փորձը չի կարող հիմք հանդիսանալ արարքը որպես առանձնապես չարամիտ խուլիզանություն որակելու համար», հանգել են հետևության, որ ճիշտ կլիներ, որ ՀՀ նոր քրեական օրենսգրքում պահպանվեր «մարմնական վնասվածքներ հասցնելու համար հատուկ հարմարեցված այլ առարկաներ» ձևակերպումը 1:

Նման կարծիքի հետ դժվար է համաձայնվել հետևյալ պատճառաբանությամբ:

Նախ՝ ՌԴ Գերագույն դատարանի Պլենումի հիշյալ որոշումն ընդունվել է 1991թ., այսինքն՝ հին ՌԴ քր. օր-ի 206-րդ հոդվածի կիրառման կապակցությամբ, երբ քննարկվող որակյալ հանգամանքն օրենսգրքում նախատեսված է եղել:

Բացի այդ, 01.01.1997թ. ուժի մեջ մտած ՌԴ նոր քրեական օրենսգրքի 213-րդ հոդվածն այդպիսի որակյալ հանգամանք չի նախատեսել: Այդ պատճառով Պլենումի որոշման մեջ բերված պարզաբանումը փաստացի իր նշանակությունն ու ուժը կորցրել է (դրա մասին են վկայում ՌԴ դատական պրակտիկայի տվյալները):

Միևնույն ժամանակ ՀՀ դատարանների նախագահների խորհրդի 29.12.2005թ. ընդունած «Խուլիզանության կիրառման վերաբերյալ» թիվ 71 որոշումը տվյալ հարցի վերաբերյալ ամրագրել է ճիշտ մոտեցում՝ պարզաբանելով, որ «արարքը ՀՀ քր. օր-ի 258-րդ հոդվածի 4-րդ մասով որակելու համար նշանակություն չունի, թե զենքը կամ որպես զենք օգտագործվող առարկան հատուկ հարմարեցված է, թե ոչ, մեղադրյալի կողմից այն վերցվել է նախօրոք, թե հենց դեպքի վայրից» (5-րդ կետ):

IV. Հանցավոր արարքի կատարման ընթացքում զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների **գործադրումը** հիմք է հանդիսանում հանցագործությունը ՀՀ քր. օր-ի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով, 258-րդ հոդվածի 4-րդ մասով, կամ համապատասխան այլ հոդվածներով որակելու համար այն դեպքում, երբ՝ ա) մեղադրյալը դրանց օգտագործմամբ հասցնում է մարմնական վնասվածք, բ) փորձում է հասցնել մարմնական վնասվածք, սակայն իր կամքից անկախ պատճառներով չի կարողանում, գ) արարքը կատարելու ընթացքում նշված առարկաների օգտագործումը քաղաքացիների կյանքի և առողջության համար ստեղծում է իրական սպառնալիք:

Հետևապես, այդ առարկաների միայն ցուցադրումը, որը զուգորդված չէ մարմնական վնասվածքներ հասցնելու (սպառնալիքներ տալու) որևէ գործողության հետ, չի կարող հիմք հանդիսանալ արարքը որակել որպես զենք օգտագործվող այլ առարկայի գործադրմամբ կատարված:

Ինչպես հայտնի է, ավագակությունը դասվում է, այսպես կոչված, «հատված» («ցրպփպվ-վո») հանցակազմերի շարքին, երբ հանցանքն ավարտված է համարվում ավագակային հարձակման պահից և գույքի փաստացի հափշտակությունը կամ տուժողին վնաս պատճառելը պարտադիր չեն: Բացի այդ, բռնությունը կամ սպառնալիքը, այդ թվում՝ զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրմամբ, պետք է դիտել որպես ավագակության հատկանիշ ոչ միայն այն դեպքում, երբ այն գործադրվում է գույքին տիրանալու պրոցեսում, այլև գույքին տիրանալուց անմիջապես հետո՝ այն իր մոտ պահելու նպատակով:

Իսկ խուլիզանությունը ձևական (ֆորմալ) բնույթի հանցակազմ է: Հետևապես հանցագործությունն ավարտված է համարվում այն պահից, երբ մեղադրյալը դիտավորությամբ հասարակական կարգը կոպիտ խախտելու նպատակով համապատասխան գործողություններ է կատարում 2:

V. Նախկին ՀՀ քր. օր-ի 222-րդ հոդվածի 4-րդ մասը պատասխանատվություն էր սահմանում ոչ միայն զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների, ինչպես նաև մարմնական վնասվածքներ հասցնելու համար հատուկ հարմարեցված առարկաների **գործադրման**, այլ նաև դրանց **գործադրման փորձի համար**:

Գործող քր. օր-ի 258-րդ հոդվածի 4-րդ մասում զենքի և համապատասխան առարկաների գործադրման փորձի մասին նշում չկա: Կարող է թվալ, որ նոր օրենսգրքում զենքի (առարկաների) գործադրման փորձի համար պատասխանատվությունը վրա չի հասնում: Դա այդպես չէ: Ձենքի (առարկաների) գործադրումը՝ որպես սեռային հասկացություն, իր մեջ ներառում է ոչ միայն ֆիզիկական, այլ նաև հոգեբանական գործադրում: Բացի այդ, զենքի (առարկաների) գործադրումը կարող է լինել նաև այն դեպքերում, երբ դրանք փաստացի չեն գործադրվել, գործադրելու իրական փորձ չի եղել, սակայն կոնկրետ դեպքում դրանք տուժողի կյանքի կամ առողջության համար իրական վտանգ են ներկայացնում: Օրինակ՝ մի խուլիզանության գործով մեղադրյալը, նպատակ չունենալով տուժողին մարմնական վնասվածքներ պատճառել, վախեցնելու նպատակով դանակը կացրել է նրա մարմնին: Մեկ այլ քրեական գործով մեղադրյալը նույն նպատակով ասորճանակով օդ է կրակել (դա արդեն զենքի ձևական ցուցադրում չէ):

Բոլոր դեպքերում զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաների գործադրումը դրանց գործադրման փորձից սահմանազատելու, ինչպես նաև պարզելու, թե արդյոք հանցագործության կատարման ժամանակ մեղավոր անձի մոտ առկա զենքը կամ համապատասխան առարկան մարդկանց կյանքի կամ առողջության համար իրական վտանգ են ստեղծել, անհրաժեշտ է պարզել և իրենց համակցության մեջ գնահատել արարքի օբյեկտիվ և սուբյեկտիվ հատկանիշները:

Արդեն նշվեց, որ հանցավորի մոտ զենքի (առարկայի) առկայությունը և դրա ցուցադրումը, նույնիսկ բանավոր սպառնալիքը, որը սակայն օբյեկտիվ հնարավորության դեպքում այն կիրառելուն ուղղված կոնկրետ գործողություններով չի զուգորդվել, հիմք չէ արարքը տվյալ որակյալ հատկանիշով որակելու համար:

VI. Որպես զենք օգտագործվող այլ առարկաները կարող են ունենալ յուրահատուկ ձև: Օրինակ՝ ավազակային հարձակման ժամանակ թմրամիջոցները կամ հոգեենթագործուն նյութերը տուժողի կամքին հակառակ նրա մարմնի մեջ ներարկելը կարող է դիտվել որպես զենք օգտագործվող այլ առարկա: Արարքը ՀՀ քր. օր-ի 175-րդ հոդվածի 2-րդ մասի 4-րդ կետով որակվում է նաև այն դեպքում, երբ տուժողի վրա հարձակումը կատարվում է շների կամ այլ կենդանիների օգտագործմամբ (եթե այդ եղանակով տուժողի կյանքին կամ առողջությանը իրական վնաս կարող է հասցվել)³:

Բացի «զենք կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաներ» հանցավոր արարքի որակյալ հանգամանքը, գործող քրեական օրենսդրությունը պարունակում է նաև **«զենք կամ հատուկ միջոցներ գործադրելը»** ծանրացնող հանգամանքը (օրինակ՝ ՀՀ քր. օր-ի 309-րդ հոդվածի 2-րդ մաս):

Հատուկ միջոցների թվին են պատկանում, օրինակ, շղթաները, տարբեր խոչընդոտներ վերացնելու համար նախատեսված միջոցները, արտասովաբեր գազեր և այլն (տե՛ս «ՀՀ Ոստիկանության մասին» օրենքը):

Կարելի է փաստել, որ «հատուկ միջոցները» միշտ կարող են դիտվել «որպես զենք օգտագործվող այլ առարկա», սակայն որպես զենք օգտագործվող այլ առարկաների ցանկը սպառնիչ չէ և այդպիսի ամեն մի առարկա միշտ չէ, որ «հատուկ միջոց է»:

VII. Հատուկ ուշադրության է արժանի այն հարցը, որը վերաբերում է հանցակիցներից մեկի կողմից զենք կամ որպես զենք օգտագործվող այլ առարկայի գործադրմանը: Տվյալ դեպքում հարց է առաջանում մյուս հանցակիցների արարքի քրեաիրավական գնահատման հետ:

Այս դեպքում հանցակիցների արարքը կարող է որակվել հետևյալ կերպ.

1. Եթե հանցակիցները նախապես պայմանավորվել են հանցագործությունը կատարելու ժամանակ, առողջությանը վնաս պատճառելու նպատակով կիրառել զենք կամ որպես զենք օգտագործվող այլ առարկաներ, կամ այն դեպքում, երբ հանցակիցները նախապես իմացել են, որ նրանցից մեկի մոտ կա զենք կամ համապատասխան առարկա, որը կարող է օգտագործվել արարքը կատարելու ժամանակ և խմբի անդամները գիտակցել են դրանց կիրառման հնարավորությունը, բոլոր հանցակիցների արարքը կորակվի զենք կամ որպես զենք օգտագործվող այլ առարկայի գործադրման հատկանիշով:

2. Այն դեպքում, երբ հանցագործության մասնակիցները չեն իմացել նրանցից մեկի մոտ զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկայի առկայության մասին, սակայն հանցագործությունը կատարելու ընթացքում իմացել են դրա մասին և շարունակել են որևէ աջակցություն ցուցաբերել զինված կատարողին, բոլոր հանցակիցների արարքը պետք է որակել տվյալ որակյալ հատկանիշով:

3. Եթե զենքի կամ որպես զենք օգտագործվող այլ առարկայի առկայության մասին հանցակիցները չեն իմացել և դրանց կիրառումը նրանց համար եղել է անսպասելի, տեղի է ունենում կատարողի սահմանազանցում, որի համար հանցակիցները պատասխանատվության ենթակա չեն:

Այս հետևությունը հիմնավորվում է ՀՀ քր. օր-ի 40-րդ հոդվածով, (հանցակցի սահմանազանցումը), 29-րդ հոդվածի 5-րդ կետով այն մասին, որ «Դիտավորյալ հանցագործության ծանրացնող հանգամանքների համար անձը ենթակա է քրեական պատասխանատվության, եթե նա գիտակցել է այդ հանգամանքները»: ՀՀ քր. օր-ի 39 -րդ հոդվածի 6-րդ կետում ուղղակի նշված է. «Հանցակիցները ենթակա են պատասխանատվության միայն հանցագործության այն ծանրացնող հանգամանքների համար, որոնք գիտակցվել են նրանց կողմից»:

1. ՀՀ քրեական իրավունք: Հատուկ մաս. ԵՊՀ, 2004, էջ 587:

2. Գրականության մեջ ճիշտ է նշվում, որ խուլիգանության որակյալ տեսակները դասվում են նյութական-ձևական հանցակազմերի շարքին:

3. Ռուսաստանի Դաշնության Գերագույն դատարանի Պլենումի 27.12.2002թ. որոշումը (կետ 23):